# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

**13.11.2024թ.** **ք.Վանաձոր**

**Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը**
**Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը**

**Մասնակցում էին**

Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բաղդասարյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

### Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից 22.10.2024-13.11.2024թթ. ժամանակահատվածում կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

### Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը տեղեկացրեց անցած ժամանակաշրջանում անցկացված հանդիպումների, խորհրդակցությունների և իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես 11.11.2024թ-ին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների օրվան նվիրված միջոցառումների վերաբերյալ, նշելով, որ ՏԻՄ–երը արդյունավետ աշխատանք են իրականացնում և համագործակցում պետական կառավարման, հանրապետական գործադիր և այլ մարմինների հետ: Մարզպետը մաղթեց արդյունավետ, փոխշահավետ, համագործակցային աշխատանք՝ ի շահ Լոռու մարզի և մարզի բնակիչների: Ներկայացվեց նաև «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ում անցկացված խորհրդակցության վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ այն կարևոր առաջընթաց է արձանագրել առողջապահության բնագավառում, առողջապահության որակի բարելավման և բնակչության սպասարկման, ինչպես նաև նոր ներդրումների ուղղությամբ: Նաև

կարևորեց նշված բնագավառում վերապատրաստումների, նոր տեխնոլոգիաների յուրացման, կիրառման և որակի բարձրացման անհրաժեշտությունը:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կամո Աշրաֆյանը աշխատակազմին ներկայացրեց մարզպետի նորանշանակ խորհրդականին՝ Նարեկ Թովմասյանին: Աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները և մարզպետը շնորհավորեցին Ն.Թովմասյանին պաշտոնի նշանակվելու կապակցությամբ՝ մաղթելով բեղուն, համագործակցային աշխատանք, տրված հանձնարարականների և պարտականությունների կատարման ու խնդիրների լուծման ուղղությամբ: Մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և պատրաստակամություն՝ առաջադրված խնդիրները օրենսդրության պահանջներին համապատասխան լուծելու ուղղությամբ:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց ընթացիկ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով, որ համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ներկա մակարդակը ցածր և մտահոգիչ է մի շարք համայնքներում՝ մասնավորապես Ալավերդի, Վանաձոր, Գյուլագարակ և Փամբակ համայնքներում, և՝ որ տվյալ համայնքների ղեկավարներին առաջարկվել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքագրման մակարդակը բարձրացնելու և պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալներին և մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին կոնկրետ առարկայական գործողություններ իրականացնել մարզի համայնքների ղեկավարների հետ՝ ըստ հարկատուների, անհրաժեշտության դեպքում, առաջարկել պատասխանատվության միջոցներ ձեռնարկել և վարչարարության միջոցներ կիրառել՝ պարտավորությունների պատշաճ կատարման նպատակով, պահանջել համայնքների ղեկավարներից ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել ձեռնարկված միջոցների և արդյունքների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում իրականացված աշխատանքների, հանդիպումների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը ներկայացված զեկույցի շրջանակներում հանձնարարեց անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել հանդիպումների պատշաճ լուսաբանման, իրականացված բազմաթիվ այցերի ընթացքում ազգաբնակչության հետ անմիջական հանդիպումների և շփումների կազմակերպման և անցկացման կարևորությունը և դրանց արդյունքների պատշաճ լուսաբանումը և օրենսդրական ու այլ նորարարությունների վերաբերյալ տեղեկատվության մատուցումը:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Գ.Բաղդասարյանը և զորահավաքային բաժնի պետ Ա.Հակոբյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեց վարչության

կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, միաժամանակ մտահոգություն հայտնեց ս.թ. մայիսի 25-26-ին արտակարգ իրավիճակների հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասների փոխհատուցման ուշացման վերաբերյալ:

7. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց բաժնի կողմից իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես Ֆրանսիայի հայ համայնքի կողմից Ալավերդի համայնքին տրամադրվող բարեգործական ծրագրի ընթացքի վերաբերյալ:

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

**ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներ ղեկավարներին՝**

Ամենօրյա վերահսկողության տակ պահել տրված հանձնարարականների կատարման ընթացքը, անձնական պատասխանատվություն կրել ենթակա աշխատակիցների աշխատանքային գործունեության և գործառույթների իրականացման ուղղությամբ, բացառելով իրավասությունների սահմանազանցումը, խստորեն պահպանել աշխատանքային կարգապահության և այլ կանոնների պահանջները, տարբեր հանդիպումների ընթացքում լինել ներկայանալի՝ հանրային ծառայողի պաշտոնին և պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներին հարիր իրացման շրջանակներում:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-11-15 17:35:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99